Երիտասարդ ՍՈՒԼԹԱՆ ԱՀՄԷԴ Շահը ծնուել է 1896 թ. Թաւրիզում, երբ նորա հայր նախկին Շահ Մուհամմէդ Ալին թագաժառանգ էր։ Ներկայումս ՍՈՒԼԹԱՆ Ահմէդ Շահը 18 տարեկան է։ Նա ներկայանում է Ղաջարների ցեղից 7-րդ Շահը։ Երբ Մուհամմէդ Ալի Շահին 1909 թ. օգոստոս ամսին հեռացրին գահից՝ անմիջապէս Շահ հրատարակուեց ՍՈՒԼԹԱՆ Ահմէդ դեռ ևս 13 տարեկան հասակում։ Նա իւր կրթութիւնը ստացել է Թեհրանում։ Գիտէ մի քանի օտար լեզուներ, որոնցից աւելի յաջող հասկանում է ֆրանսերէն լեզուով։ Երիտասարդ Շահը սահմանադրական ձգտումներ ունի և համոզուած է՝ որ միայն լաւ հիմունքներով կազմուած սահմանադրական իշխանութիւնը կարող կը լինի զոհացնել ժողովրդեան։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Կոնդակ գերապատիւ Տ. Բագրատ եպիսկոպոսի անունով, որով առաջադրուեց աբեղայ ձեռնադրել Տաճկաստանցի Յովհաննէս Ղ. Կարապետեանին։ 3 յունիսի, թ. 803։

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքի վանահայր Վահան վարդապետ Տէր Գրիգորեանի մայիսի 31-ի, թ. 23 յայտարարութեամբ ներկայացրած յօգուտ Դպրոցական ֆօնդի մի հազար (1000) ռուբլին Ս. Խաչ վանքի արդիւնքից։ 7 յունիսի, թ. 812։

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմածնի Սինօդին նոյն Վահան վարդապետ Տէր Գրիգորեանի մայիսի 31-ի, թ. 24 յայտարարութեամբ ներկայացրած Մայր Աթոռի Գ. Հոգևոր Ճեմարանի օգտին հինգ հարիւր (500) ռուբլի նոյն վանքի արդիւնքից։ 7 յունիսի, թ. 813.

Կոնդակ Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի անունով, որով հաստատուեցին Հոգևոր Դպրանոցի

հոգաբարձութեան պաշտօնում եռամեայ ժամանակով պ. պ. Գէորգ Ամիրեան, բժիշկ Գրիգոր Տէր-Յակովբեան, Դաւիթ Զուբեան, Գաբրիէլ Մնացականեան և Թորգոմ Նիկողայոսեան. իսկ վերստուգիչ Յանձնաժողովի անդամ՝ պ. պ. Գեղամ Ազիզեան, Հայրապետ Գաբրիէլեան, Կարապետ Խաչատրեան, Սաղաթիէլ Թաբաղեան և Յակովբ Տէր-Յակովբեան։ 11 յունիսի, թ. 838։

Կոնդակ Տ. Բագրատ եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց աբեղայութեան կոչում տալ Փութայիսի Հայոց եկեղեցիների գործակալ Երուանդ քահանայ Մանուկեանին, Վրաստանի առաջնորդի գրաւոր միջնորդութեան և նորա մի քանի խնդրագրերի համաձայն։ 13 յունիսի, թ. 857։

Նորին Սրբութեան մակագրութեամբ, Երևանի փոխթեմակալի յունիսի 15-ի, թ. 1183 յայտարարութեան համաձայն, թոյլ տրուեց թաղել հանգուցեալ Ստեփաննոս քահ. Տէր Գրիգորեանի դին Երևանի Ս. Կաթուղիկէ եկեղեցու բակում։ 15 յունիսի, թ. 860։

Նորին Սրբութիւնը Սինոդի յունիսի 13-ի, թ. 1103 յայտարարութեան վրայ՝ Խոթայ կալուածների շահագործման մասին, հետևեալն է մակագրել. «Պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինոդին յանձնել Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին բանակցել բոլոր մնատուները շահագործել ցանկացողների հետ այն պայմանների սահմաններում, որոնք Սինոդի անդամոց և իւր ներկայութեամբ մշակուեցին մեզ մօտ, և վերջնական պայմանները իւր եղրակացութեամբ ներկայացնել Սինոդին ի տնօրէնութիւն»։ 15 յունիսի, թ. 861։

Գրութիւն Ներքին Գործոց Տ. Նախարարի անունով, որով միջնորդութիւն յարուցուեց թոյլ տալ հանդանակութիւն բանալ Ռուսահայերի մէջ յօգուտ Մոսկուայի Լազարեան Ճեմարանի նորա հարիւրամեայ յոբելեանի առթիւ, որ տօնուելու է այս տարուայ դեկտեմբերի 9-ին։ 16 յունիսի, թ. 866։

Դրութիւն Կովկասի Տ. Փոխարքայի անունով, որով միջնորդութիւն յարուցուեց՝ թոյլատրել ժողովարարութիւն անել Կովկասի հայերի մէջ յօգուտ Մոսկուայի Լազարեան ճեմարանի՝ նորա 100-ամեայ յոբելեանի առթիւ, որ կատարուելու է այս տարուայ դեկտեմբերի 9-ին։ 16 յունիսի, թ. 865։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Կարնոյ առաջնորդ Տ. Սմբատ եպիսկոպոսին, որ առհասարակ քահանաներին վարդապետական լանջախաչ չի տրուում։ 18 յուն., թ. 894։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Ղևոնդ եպիսկոպոսին տալ Շամախու թեմի առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոսին ժամանակաւորապէս հետը տանելու համար մի ձեռքի գաւազան (ասա) և մի եպիսկոպոսական թագ արտախուրակներով։ 19 յունիսի, թ. 903։

Նորին Սրբութիւնը Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Ղևոնդ եպիսկոպոսի յունիսի 18-ի, թ. 13 յայտարարութեան վրայ մակագրել է. «Որովհետև Մայր Տաճարում վարժ և ձայնեղ դպրի կարիորութիւն է զգացուում, ուստի համաձայն Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Ղևոնդ եպիսկոպոսի յայտարարութեան, պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինոդին կարգադրել վարձել Գեղամ Յակովբեանին դպիր և տալ ամսական 25-ական ռուբլի ռոճիկ, սկսած առաջիկայ յուլիսի 1-ից։ Այս մասին տեղեկութիւն տալ Տ. լուսարարապետին։ 19 յունիսի, թ. 904։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Աթոռի Տպարանի վարչութեան ուղարկել Ռիգայում բանտարկուած Թոմաս Դարբինեանին ընթերցանութեան համար մի աւետարան և կրօնական բովանդակութեամբ մի քանի այլ գրքեր։ 19 յունիսի, թ. 908։

Դիւանի գրութեամբ վերադարձուեց Վրաստանի առաջնորդին դպիր Սարգիս Թամալեանի կազմած «Յիսուսի կեանքը» դասագիրքը և առաջադրուեց յայտնել հեղինա-

կին, որ Նորին Վեհափառութեան կողմից թոյլատրուում է տպագրել, միայն նախօրօք ուղղելով ընդգծուած խօսքերն ու նախադասութիւնները։ 19 յունիսի, թ. 909։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Ղարաբաղի թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Զաւէն վարդապետին, համաձայն ս. Էջմիածնի Սինոդի կարգադրութեան, Պետրոս քահանայ Տէր-Յովհաննիսեանին Շուշուց տեղափոխել Խանքենդ աւան, որի վրայ ձեռնադրուած է նա։ 19 յունիսի, թ. 910։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվազեանին քահանայ ձեռնադրել Ատրպատականի թեմի Մուժամբար գիւղի ընծայացու Արմենակ Առաքելեանին, որ աւարտել է Գ. Ճեմարանի Ա. լսարանը։ 19 յունիսի, թ. 911։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Ղարաբաղի թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Զաւէն վարդապետին այս ամառ այցելել թեմը և հոգ տանել բանալ փակուած ծխական դպրոցները, այլ և նորերը բանալ այն գիւղերում, որոնց հասարակութիւնները զուրկ են դպրոցից և շրջագայութեան մասին մանրամասն զեկուցում ներկայացնել Նորին Սրբութեան։ 19 յունիսի, թ. 912։

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Մայր Աթոռի մատենադարան Տ. Կարապետ եպիսկոպոսի ներկայացրած «Կնիք հաւատոյ» և «Քարոզ-գիրք» ժողովածու ձեռագրերը և մի հրմայիլ։ 23 յունիսի, թ. 916։

Դիւանի գրութեամբ յանձնուեց Մայր Աթոռի թանգարանին Տ. Կարապետ եպիսկոպոսի ներկայացրած հնոտի վական ու սկիհի ասեղնագործ ծածկոցը։ 23 յունիսի, թ. 917։

Շրջաբերական կոնդակներով պատուիրուեց Ռուսահայոց բոլոր թեմական առաջնորդներին, որ կարգադրեն ուղարկել Մայր Աթոռի տպարանից ստացած օրացոյցների, «Արարատի» և չափաբերական մատեանների թէ 1913 թ.

և թէ նախընթաց տարիների կուտակուած ապառիկները և աշխատել այսուհետև ապառիկ չթողնել։ 23 յունիսի, թ. թ. 919—924։

Նորին Սրբութիւնը Արսէն վարդապետ Ղլտճեանի յունիսի 21-ի յայտարարութեան վրայ մակագրել է. «Ի նկատի ունենալով, որ Տ. Արսէն վարդապետը կարիք ունի իւր մասնագիտական աշխատանքների համար կաթոլիկ և բողոքական եկեղեցիների դաւանաբանութիւն և պատմութիւնն ուսումնասիրելու արտասահմանում, ուստի յարգելով նորա խնդիրը, պատուիրում ենք Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին տալ Տ. Արսէն վարդապետին Սանահնի վանքից նորա միաբանական չորս ամսուայ ռոճիկը միանուագ»։ 25 յունիսի, թ. 935։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Տարօնի առաջնորդին բացատրել, թէ ինչու Պոպովեան վարժարանը ցանկանում է կառուցանել Մշոյ ս. Կարապետ վանքից հեռու, մինչդեռ երջանկայիշատակ կաթուղիկոսի հաստատած ծրագրով պիտի շինուի վանքին մօտիկ։ 25 յունիսի, թ. 937։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Նոր-Նախիջևանի փոխանորդին բացատրել Թոփտեցի Յարութիւն Ադամեանին, որ երկրորդ և երրորդ անգամ ամուսնացողը քահանայ չի կարող ձեռնադրուել։ 25 յունիսի, թ. 939։

Կոնդակ Ռեսսարաբիայի թեմի առաջնորդի անունով, որով արտօնուեց թոյլ տալ մահից յետոյ թաղել Նոր-Նախիջևանցի Գրիգոր և Գեղեցիկ Թերզեանների դիակները Ն.-Նախիջևանի ս. Համբարձման եկեղեցու բակում, ի նկատի ունենալով, որ Թերզեանը ի միջի այլ բարեգործութիւնների, նուիրել է Մայր Աթոռին մի հազար ռուբլի։ 15 յունիսի, թ. 943։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով առաջադրուեց արձակել Մայր Աթոռի տպարանական վարչութեան անդամութիւնից Տ. Թադէոս աբեղային, որը ծանրաբեռնուած է այլ պաշտօններով, և նորա տեղը կարգել Երուանդ աբեղայ Մանուկեանին։ 26 յունիսի, թ. 944։

Դիւանի գրութեամբ ծանուցուեց Ամերիկայի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Արսէն ծ. վարդապետ Վեհունուն, որ երջանկայիշատակ Տ. Տ. Մկրտիչ ա. և Մատթէոս բ. Կաթուղիկոսների տնօրէնութեանց կոնդակների հիման վրայ Ղևոնդ վարդապետ Մարդուկէսեանն իսպառ զրկուած է հոգևոր կոչումից, հետևապէս նորա կարգը չէ վերադարձուելու այլևս։ 30 յունիսի, թ. 961։

Դիւանի գրութիւններով առաջադրուեց Շամախու և Վրաստանի առաջնորդներին ուղարկել Նորին Սրբութեան առևտրական դպրոցների Հայոց կրօնի ծրագիրը։ 30 յունիսի, թ. թ. 971, 972։

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Մայր Աթոռի մատենադարան Ղզլ-Արվատի Յարութիւն քահանայ Մղերբեանի ուղարկած «Հարանց Վարք» ձեռագիրը։ 30 յունիսի, թ. 973։

Դիւանի գրութեամբ շնորհակալութիւն յայտնուեց Յարութիւն քահանայ Մղերբեանին՝ նորա ուղարկած «Հարանց Վարք» ձեռագրի համար։ 30 յունիսի, թ. 974։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԴԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կոնդակ Տաճկաստանի Գոնիայի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Գարեգին ծ. վարդապետ Խաչատուրեանի անունով, որով՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքի միջնորդութեան համաձայն, վարդապետական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 12 յունիսի, թ. 851։

Կոնդակ Բաղէշի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Սուրէն ծ. վարդապետ Գալէմեանի անունով, որով՝ համաձայն Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի միջնորդութեան, վարդապետական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 12 յունիսի, թ. 852։

Կոնդակ Եւդոկիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Շաւարշ ծ. վարդապետ Սահակեանի անունով, որով՝ Կ. Պոլսի